

ԲԱԶՄԱՉԱՐԳԱՐ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ

Posted on September 11, 2018 by Keghart



Category: [Opinions](#)



Մեր Պարզեւ Դաւիթեան, Թորոնթօ, 11 Սեպտեմբեր 2018

Մարդկային բարոյականութեան ամենավսեմ չափանիշն է ճշմարտութիւնը, եւ մարդկութեան կրթութեան սատարող բոլոր կրօններն ու վարդապետութիւնները կարելորած ու գովերգած են անոր վարկն ու արժէքը: Օրէնքներ մշակուած են բոլոր երկիրներու մէջ՝ պատժելու ստախօսը: Սակայն եւ այնպէս, ստախօսութիւնը իր տիրական ներկայութեամբ կը լեցնէ մեր ամէնօրեայ կեանքը, եւ հոն ուր օրէնքի անունով իշխանութիւն կը դասաւորուի, այնտեղ ուրիշ տեղերէ աւելի օրինազանցութիւն կը կիրարկուի:



Զմարտութիւնը հարիւր տարիէ աւելի է կը սպասէ, որ Թուրքիոյ մէջ իշխանաւորներուն կողմէ ուրացուած եւ քողարկուած Հայկական Ցեղասպանութիւնը ընդունուի եւ բացայայտուի: Ուսեալ կոչեցեալ մարդիկ թուրք իշխանաւորներու ազգայնական փրոփականտային զինուորագրուելով՝ ոչ-ճշմարտախօսութիւնը դարձուցած են գերի եւ ծառայ կեղծիքի ու շահախնդրութեան:

Մեր Պարզեւ Դաւիթեան, Թորոնթօ, 11 Սեպտեմբեր 2018

Մարդկային բարոյականութեան ամենավսեմ չափանիշն է ճշմարտութիւնը, եւ մարդկութեան կրթութեան սատարող բոլոր կրօններն ու վարդապետութիւնները կարելորած ու գովերգած են անոր վարկն ու արժէքը: Օրէնքներ մշակուած են բոլոր երկիրներու մէջ՝ պատժելու ստախօսը: Սակայն եւ այնպէս, ստախօսութիւնը իր տիրական ներկայութեամբ կը լեցնէ մեր ամէնօրեայ կեանքը, եւ հոն ուր օրէնքի անունով իշխանութիւն կը դասաւորուի, այնտեղ ուրիշ տեղերէ աւելի օրինազանցութիւն կը կիրարկուի:



Զմարտութիւնը հարիւր տարիէ աւելի է կը սպասէ, որ Թուրքիոյ մէջ իշխանաւորներուն կողմէ ուրացուած եւ քողարկուած Հայկական Ցեղասպանութիւնը ընդունուի եւ բացայայտուի: Ուսեալ կոչեցեալ մարդիկ թուրք իշխանաւորներու ազգայնական փրոփականտային զինուորագրուելով՝ ոչ-ճշմարտախօսութիւնը դարձուցած են գերի եւ ծառայ կեղծիքի ու շահախնդրութեան:

Զմարտութիւնը եօթանասուն տարի է տակաւին կը սպասէ, որ Իսրայել իր ապահովութեան վտանգը պատճառաբանելով՝ պաղեստինցիին հողն ու տունը չսեփականացնէ, եւ «հոլոքոսթ»-ի զոհ դարձած ըլլալով՝ Հայկական Ցեղասպանութեան փաստը չնսեմացնէ:

Զմարտութիւնը գրեթէ քսան տարի է կը սպասէ Հայաստանի մէջ, որ Ազգային Ժողովի երդիքին տակ Կարէն Դեմիրճեանի եւ Վազգէն Սարգսեանի ու տասնեակ մը

պատգամաւորներու սպանութիւնը կազմակերպող մեղսակիցներուն ինքնութիւնը բացայայտուի:

Ծշմարտութիւնը, ապագային, իրականութեան բացայայտման շահ տ պիտի սպասէ, որպէսզի յստակ դառնայ, թէ որո՞նք եւ ինչո՞ւ կրակի տուին Միջին Արեւելքը՝ պատճառ դառնալով երկիրներու կործանումին եւ միլիոնաւոր անմեղ զոհերու ու տեղահանուածներու:

Եւ ամէն օր Ամերիկայի Սպիտակ Տան յարկին տակ սարքուող եւ կատարուող դաւադրութիւններն ու սուտ յայտարարութիւնները կը նսեմացնեն ճշմարտութեան վարկն ու պատիւը: Որեւէ ատեն եւ տեղէ անելի պատերազմ կայ ճշմարտութեան դէմ այսօր Ամերիկայի ներկայ իշխանութեան կողմէ, ուր ամէն օր սուտ խաչափայտի վրայ կը գամուի մարմինը ճշմարտութեան՝ ի ծառայութիւն նախագահի մը, որ իր տարօրինակ նկարագրով վտանգ դարձած է բոլորին: Ան եւ իր շուրջ գործող մարդիկ «սուտը իրականի պէս» կը խօսին՝ տգետ միտքեր շահագործելու գոհունակութեամբ: Պատերազմասերներ կը փչեն ատելութեան կրակին ամէն տեղ, եւ Ամերիկայի բազուկը բարձրացուցած՝ ամէնքին դէմ մարտահրաւերներ կը կարդան՝ տեղ մը դեսպանատուն փոխադրելով (Երուսաղէմ), ուրիշ տեղ դասեր տալով (Քորէա), շատ մը տեղեր ալ համաձայնագիր պատռելով (Իրան), կամ անընդունելի մաքսագիներ (tariffs) պարտադրելով (Եւրոպա, Գանատա եւ Մեքսիքա):

Ծշմարտութիւնը խափանելու ամէնէն ցայտուն օրինակը եղաւ վերջերս ամերիկացի ծերակուտականներու կողմէ հարցաքննուող դատաւոր Պրեթ Զաւանայի (Brett Kavanaugh) որպէս Ամերիկայի Բարձրագոյն Ատենի թեկնածութիւնը (Supreme Court nominee), երբ բազմահազար վաւերագրային փաստաթուղթեր չիրապարակուեցան եւ չմատուցուեցան զինք հարցաքննող ծերակուտականներուն՝ քողարկելու համար անոր ունեցած անցեալի դիրքորոշումները խիստ կարեւոր նիւթերու մասին: Եւ ամէնէն անելի յատկանշական պարագան այդ հարցաքննութեան՝ եղաւ դատաւորին կողմէ տրուած խուսափողական պատասխանները ուղղուած հարցումներուն: Հոս ալ ճշմարտութիւնը խաչուեցաւ իրեն պաշտպան հանդիսանալու, նուիրուածութեամբ ծառայելու երդուեալին կողմէ, երբ ան, այսինքն այդ դատաւորը, ստեց՝ չպատասխանելով հարցումի մը, որ յստակ «ոչ» կամ «այո» պատասխան կը պահանջէր ծերակուտականի մը ըրած հարցումին: Այդ հարցումը հետեւեալն էր. «Հեռաձայնով երբեք խօսա՞ծ էր այն փաստաբանական գրասենեակին հետ, ուր կը գործէր նախագահ Տանըլտ Թրամփի փաստաբաններէն մէկը»: Այս հարցումին յստակ պատասխան մը չտուաւ այդ դատաւորը եւ իր խուսափողական կեցուածքով ոտնակոխեց ճշմարտութիւնը:

Ըսինք, թէ օրինազանցութիւնը կը կիրարկուի ամէնէն շատ անոնց կողմէ, որոնք օրէնքի անունով եւ անով զինուած՝ իշխանութեան կը հասնին: Բազմաշաղար ճշմարտութիւնը եղած է միշտ զոհը անոնց, որոնք օրէնքը շրջանցելով՝ ամէն ինչ կը ծառայացնեն իրենց շահը հետապնդելու եւ դիրքը ամրապնդելու համար: Այդպիսիները դուրս գալով

անազնիւ ու շահախնդիր մարդոց շարքերէն՝ յաճախ բարոյագիտութեան մասին կը խօսին եւ ազնիւ ըլլալ կը դաւանին: Այդպիսիները կը յիշեցնեն խօսքը անոր, որ կ'ըսէ.
«Ցաւալի է, որ նոյն օրն են շնչում եւ նոյն ջուրն են խմում սրիկաները եւ ազնիւ մարդիկ»:

